զի ոչ ոք կարէ այսուհետեւ Ինալ տատ ասէին՝ ոչ Մեծաւոր և ոչ Միաբան՝ կամ ջանադիր լինիլ դատանել հնարս աղատութեան, և կամ առաքել զայլ ոմանս 'ի տեղի նոցա, տիրել հայրենի ժառանգութեանց՝ զի մի կորիցէ, ահա մերձեալ է ժամանակ գալստեան Կուսակալին։

Իլամն դատաստանին Հայոց եւ Ցունաց առաքեցին յայնժամ ատենակալք առ Արքայ՝ որպէս գրեցաք։ Եւ 'ի սոյն աւուրս (1811· 'ի 13 Փետրվարի) եհան զայն Արքայ և առաքեաց 'ի Դուռն մեծի դենպետին հանդերձ Կայսերական հրովարտակաւ, և եղեւ ուրախութիւն և ցնծութիւն մեծ ազգին Հայոց։ Եւ կաղմեցաւ Ատեան մեծ 'ի Դուռն Դենպետին, ('ի 27 Փետրվարի) ուր ժողովեալ էին ամենայն Նախարարք և գործակալք Տէրութեան մեծ և փոքր· գնացին 'ի կոչն Հայք եւ Ցոյնք, ուր նախ ընթերցան զիլամն, և ապա զհրաման Արքային, որոյ իմաստն էր «Հիմն եղեալ զհրովարտակս նախնոյն իմոյ Սէլիմայ Արքայի՝ որ տիրեաց Պաղեստինոյ, եւ ըստ մտաց նոցին հրամայեցի տալ հրովարտակ Հայոց և Ցունաց, զի որպէս տիրէին յառաջագոյն տեղեաց իւրեանց եւ կատարէին զուխտս, նոյնպէս արասցեն և այժմ չնեղելով զիրեարս, զի զերկոսին ազգսն հաւասար ճանաչեմ· զի թէպէտ եւ Ցոյնք հրամանաւ իմով չինեցին զտաճարն, այլ զբաժին ծախուց տեղեացն Հայոց հատուցցեն նոքա Ցունաց, ըստ կէս ծախուց բաժանորդ տեղեաց՝ և զբովանդակ ծախսն սեփհական տեղեաց, և հաստատեսցի այս օրինօք Դատարանի, զի մի յետոյ հակառակեսցին ընդ միմեանս· զի յայանի լիցի թէ Ցոյնք միայն չինելոյ ունին հրաման, և ոչ բոլորին տիրելոյ, և ամենայն հրովարտակք՝ զորս առեալ են երկոքին ազգքն, ամենեքեան անվաւեր և խափանեալ համարեսցին, և միայն յարգեսցին հրովարտակքն Սէլիմայ, տուեալ 'ի թուին Հիճրէթի ۹۲۳։ Եւ նոր հրովարտակքն՝ զորս հանդերձեալ եմք տալ երկոցունց, արձանագրեսցին յամենայն Դիւանս, և մի օրինակն պահեսցի 'ի գանձն Արքայի»։

Լուեալ Հայոց զհրաման Արքային՝ խոնարհեալ յերկիր բարեմաղթութեամբ չնորհս կալան բարերար յԱրքայէ։ Դատաւորք հարցին ցՑոյնս, ասացէք՝ ո՞րքան է ծախք